ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36ՐԴ ՏԱՐԻ | ՇԱԲԱԹ 26 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1887 | ԹԻՒ 3904

ՄԱՍԻՍ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ։ Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 ղրշ. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք։ Բաժանորդագները դրկելու է առ մատակարարութիւն Որեւելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան։

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն. Վսեմ. Յովհաննէս Էֆէնտի Սպարթալեան։

Սիրոն դէցանուշի. (Ա. ՀԱՄԲԱՐԳԱՐԹԱՆ).

Սիւնեաց աշխարհի ապստամբութեան գործը ռուսական դատարանի առաջ. (ՇՈՒՇԵՑԻ)։

Դրդապատմութիւն. (ՍԻՐՈՅՆ Ի. Ց. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ)։

Վէպ. Հայաստանի բարքեր. Սիսակ և Սոսուն, Բնութեան սոխակներ. (Ղ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ).

Քաղուած Շաբաթական Լրոց. Արտաքին, Ներքին, Ազգային։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 25 ԴԵԿՏԵՄԲ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՍԵՄ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖԷՆՏԻ ՍՊԱՐԹԱԼԵԱՆ

Հեռագիրն անբացատրելի տխրութեամբ մը համակեց բոլոր սրտերը, լուծելով Վսեմ. Յովհաննէս Էֆէնտի Սպարթալեանի յանկարծական մահն։ Այս մահն այնու մանաւանդ ի սուգ համակեց ամեն հայ սրտեր զի Վսեմ. Սպարթալեան Էֆէնտի իւր կենաց այն շրջանին մէջ կը գտնուէր, յորում կարող էր տակաւին առաքինական նոր նորանոր գործերով պանծացնել իւր արդէն մեծահռչակ անունն։ Իւր կեանքն ցայն վայր եղած էր սխրալի շարունակութիւն մը աշխատասիրութեան, ուղղամտութեան եւ բարերարութեան, եւ այն պահուն երբ պիտի սկսէր վայելել իւր ազգօգուտ գործոց արդիւնքները, մահն եկաւ կորզել զնա մեր ամենուս աղապատանքէն։

Ի՜նչ բաղմաբեղուն եւ առաքինի կեանք, Վսեմ. Յովհաննէս Էֆէնտի Սպարթալեանի կեանքն, եւ ի՜նչ օրինակելի դաս մը անոնց որք իրենց դիզած ոսկիներու ամբարտակին բարձունքէն արհամարհոտ եւ անկարեկից նայուածք մը կը նետեն զիրենք ծընուցանող հասարակութեան ցաւոց եւ պէտքերուն վրայ։ Վսեմ. Յովհաննէս Էֆէնտի օրինակ մ'եղաւ բարերարութեան, — բան մը որ, ցաւ է ըսել, այնքան հաղուագէպ է մեր հորիզոնին վրայ։ Ցոյց տուաւ թէ ոսկիներու առատութեան մէջ վնտռուած հաճոյքն ի՜նչքան սին հաճոյք մ'է, եւ աւելի գերագոյն նպատակի մը ձգտեցաւ. իրեն նպատակ ընտրեց աղքատին ցաւերը դարմանել ու լոյս տալ խաւար մնաց, եւ այս առաքինութեան մէջ գտաւ մխիթարութիւն մը զոր ոչ ուրեք կարելի է գտնել։

Վսեմ. Սպարթալեան Էֆէնտի չեր մեռնի, այլ իւր գործերը կը մնան, և սերունդէ ի սերունդ հայ սրտեր երախտագիտութեամբ պիտի յիշեն զնա։ Ա՛յս պիտի լինի իւր բարերար կենաց վարձատրութիւնն։ Այս լինելու է ապաքէն մեր բոլոր հարուստներուն ալ նպատակակէտն։ Ո՞ւր են այն մեծափարթամ եւ համբաւաւոր ընտանիքներն որք փայլած են ազգին մէջ կէս դար առաջ. անոնց շատերուն անունն անգամ կորսուած է, վասն զի իրենց զաւակունք, փոխանակ աշխատասիրութեամբ եւ առաքինութեամբ եւս առաւել բարձրանալու ու ազգին օգտակարագոյն անդամներ լինելու, շռայլութեամբ մնսած փճացուցած են իրենց հօր ժառանգութիւնն։ Եթէ այդ հարուստք սիրտ եւ զգացում կրած լինէին, իրենց անունը դեռ կենդանի կը մնար, թէեւ իրենց զաւակունք ամեն բան գործած լինին նոցա անունը մթութեան մատնելու համար։

Այն երախտագիտական ցոյցերն որով հանգուցեալը պատուեցաւ իւր կենդանութեան ատեն, եւ այն ընդհանուր սուգը զոր իւր մահ կը պատճառէ ազգին, թող գրգիռ մը լինին մեր այն մեծատանց որք ազգին համար անօգուտ կերպով կուգան եւ անօգուտ կերպով կ'անցնին։ Բարերարութեան հաճոյքները սրբազնագոյն հաճոյքներ են. Վսեմ. Սպարթալեան Էֆէնտի գիտցաւ վայելել զայնս։ Օրհնեա՛լ ըլլայ իւր յիշատակը։

Մաղթենք որ Աստուած նոր Սպարթալեաններ պարգեւէ Ազգին։ Շատ են Ազգին պէտքերն, եւ իւր ցաւերն սփոփանաց կը կարօտին։ Եւ մեծահարուստ ազգայիններ պէտք են մեղ այդ պէտքերը լրացնելու եւ այդ ցաւոց դարման տանելու համար։ Կը կրկնենք, բարերարութեան պատճառած գոհունակութեան պէս մեծ գոհունակութիւն չը կայ։ Վսեմ. Սպարթալեան Էֆէնտի բարերարեց ազգին, եւ իւր անունն յայսմհետէ անմոռաց պիտի մնայ հայ տարեգրութեանց մէջ։ Ասկից աւելի սուրբ և նուիրական վայելք կա՞յ։

ԱՆՈՍՆ ՈՒՐՈՒՆՔ ՍԻՐՈՅՆ

Սիրտ մը ունի փոքրածաւալ,
Որ պարտէզ մ'է սիրուն փրթթեալ,
Գարուն անանց տիրէ փարթամ,
Ծաղկունք բուրեն հոն անթառամ։

Մարգ մ'կ պատէ շուրջըն դալար
Որոյ մէջէն խոխոջէ յար
Ոսկէ գետակըն վէտ ի վէտ
Վեհ զգացմանց երջանկաւէտ։

Փրթթինազարդ եւ խընկաբոյր
Թըփի վերայ գեղափետուր
Սիրոյ սարեակն մեղամաղձոտ
Կ'երգէ գիշերն մինչ առաւօտ։

Եւ թըռչնիկիս աչքէն վաթած
Փայլուն գունտերըն արտասուաց
Կ'ըմպեն ծաղկունք գունով գեղով
Զերթ կենսատու ցօղն այգուն զով։

Ա. ՀԱՄԲԱՐԳԱՐԹԱՆ

ՍԻՒՆԵԱՑ ԱՇԽԱՐՀԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ

Անցեալ սեպտ. 25 ին, Շուշի քաղաքում, Գանձակի Նահանգական Դատարանը դատում էր մի խիստ հետաքրքիր քըրէական գործ։ Հայ հասարակութիւնը գուցէ յիշում է, որ անցեալ տարի յուլիսին Սիւնեաց աշխարհի Տաթեւ կոչուած գիւղի մէջ ծագել էր ապստամբութիւն զինուորագրութեան առթիւ ռուս իշխանութեան դէմ, որն ճնշել էր այդ ապստամբութիւնը կոզակների եւ թնդանօթների ոյժով. այդ ժամանակ բազմաթիւ անձինք ձերբակալուել եւ ամիսներով բանտերի մէջ չարչարուելէ յետոյ, շատերին ազատութիւն շնորհելով իշխանութիւնը դատի էր ենթարկել 6 հոգի, որոց 5ը տղամարդ, եւ մինը կին, ամբաստանելով նոցա իբրեւ գլխաւոր գըրգըռիչներ եւ ժողովուրդը դէպի ապստամբութիւն դրդիչներ։ Ահա այդ գործը պիտի քննէր ու դատէր Դատարանն, որի վճռից կախուած էր ամբողջ մի գիւղի, եթէ չասենք ամբողջ հայ հասարակութեան արդարացումն կամ դատապարտութիւնը մի այնպիսի յանցանքի մէջ որպէս են ապըստամբութիւն դէպի տիրող կառավարութիւնը։ Այդ գործն աւելի կարեւորութիւն էր ստացել եւ նրանով, որ սկզբում հայոց ծայրագոյն հոգեւոր իշխանութիւնն եւս կասկածվում էր իբրեւ դրդիչ այդ ապըստամբութեան, վասն զի հայ քահանայնե[illegible] ժամանակ կամենալով արդարացնել իր անձըն յայտնել էր, որ Մակար կաթողիկոսը կոնդակով պատուիրել է «ոլչոպ» չը տալ։ Այս անակնկալ յայտնութեան առաջ յապուշ կրթած՝ ռուս կառավարութիւնը ներքին գործոց նախարար կոմս Տօլստոյի անհեղաստատ հեռագրով զարմանք էր յայտնել Մակար կաթողիկոսին, որ նորա անսասան կարծեցեալ հաւատարմութիւնը այդպիսի կասկածելի առիթ է տալիս. ի հարկէ, Վեհ. Մակար, որ զարհուրանքով լսել էր այդ լուրը, աճապարում է Ղարաբաղի առաջնորդ Սաքինեան եպիսկոպոսի ձեռքով ամենախիստ քննութիւն կատարել, որի արդիւնքըն ներկայացնելով Կայսեր համոզել է տալիս Ռուս Կառավարութիւնը թէ Վեհ. Մակար անգամ չէ երազել մի մազաչափ շեղիլ իր հաւատարիմ հպատակութիւնից։ Անտարակոյս, Մակարի հաւատարմութեան վրայ կասկածի ստուեր ձգող քահանայն պիտի ենթարկուէր խստագոյն պատժի։

Սակայն անցնինք մեր պատմութեան։

Սեպտ. 25 ին, առաւօտեան վաղ, Շուշու դատարանի դահլիճն որ սովորաբար դատարկ է լինում, ընդունում էր իր մէջ Շշում սակաւաթիւ հայ ինտէլլիգէնտ երիտասարդութիւնը։

Ժամը 10 ին «Դատաստանը գալիս է» պաշտօնական ծանուցումն արաւ մի պաշտօնեայ, բոլորն ոտքի կանգնեցին։ Ներս մտան դատաւորները. Նախագահողն էր Կօլօբով (Ռուս), անդամներն Երմոլայէվ (Ռուս) եւ Աթաբէկեան (հայ[1])։ Դատախազի (Պրօկուրօրի) պաշտօնը կատարում էր Բէցկօ (Ռուս) Նահանգական դատարանի Պրօկուրօրի օգնականը։

Ամբաստանեալոց նստարանի վրայ յայտնուեցան վեց հոգի, այն է 1. Տաթեւ գիւղի[1] Ս. Մինաս եկեղեցւոյ աւագքահանայ Տէր Սիմէօն Տէր-Սարգիսեան, քահանայական զգեստով, 49 տարեկան, կարճահասակ, խիստ համակրելի դէմքով 2. մի 80-ամեայ պառաւ կին, Աննա Թաթունց, զառամեալ, բայց գիւղական առողջութեան կայտառութեամբ, երեսը ծածկած եւ չը հասկանալով բոլորովին, որ այդ օրուայ հերոսուհին է. պառաւն առաջին անգամ տեսնելով դատարանը, պշուցեալ նայում էր, երբեմն երբեմն գլուխը շարժելով, զարմանք յայտնելով եւ հառաչ քաշելով, 3. Սուլէյմանեան, 4. Անդրէով, 5. Յովհաննէս Առաքելեան եւ 6. Պօղոս Առաքելեան, վերջին չորսը պարզ, գռեհիկ գեղջուկներ, երիտասարդ հասակի մէջ, բոլորովին զարմացած կերպարանքով եւ չը հասկանալով թէ իրենց շուրջն ինչ է կատարվում։

Ամբաստանեալների պաշտպան փաստաբանն էր Շուշեցի մասնաւոր հաւատարմատար Յովհաննէս Խաչատուրեան, որ յատկապէս Թիֆլիսից եկած էր պաշտպանութեան համար։

Ձեւակերպութիւնքն կատարուելուց յետոյ, քարտուղարն կարդաց ամբաստանական գործը կամ ազդը, որ հետեւեալն էր.

«Անցեալ 1886 ի յունիս ամսին Զէնգէզուրի (Սիւնիք) գաւառական վարչութեան (պօլիցիայի) պաշտօնեայները իշխանութեան հրամանաւ ձեռնարկումեն այդ գաւառի հայ բնակիչների ընտանեկան ցուցակները [illegible] Տաթեւ [illegible] կազմելը յանձնվում է գաւառապետի օգնական Շտաբսկապիտան Մօրէնցին, որն այդ նպատակով գնում է Տաթեւ գիւղ յունիսի 17ին, բայց չէ կարողանում ի կատար ածել իրեն յանձնած գործն, որովհետեւ Տաթեւացիք ընդդիմանում են եւ թոյլ չեն տալիս նորան սկսել գործը, ուստի նա ըստիպուած է լինում յետ դառնալ։ Նախնական քննութիւնը հետեւեալն է բացայայտել. Մօրէնցի Տաթեւ ժամանելուց քիչ ժամանակ առաջ, այդ գիւղի մէջ լուր է տարածվում, բայց յայտնի չէ ում ձեռքով, թէ գիւղերի բնակիչների ցուցակը կազմում են «ոլչոպ» (զինուոր) տանելու նպատակով։ Մօրէնցի գալու նախընթաց օրը Տաթեւի հասարակութիւնը ժողովւում են տեղական քահանայ Տէր Սիմէօնի բակը, որտեղ Տաթեւացի Յովակիմ Սուլէյմանեանն եւ Յովհաննէս Առաքելեանը դիմում են իրենց համաբնակիչներին այս խօսքերով.

«Վաղը կը գայ գաւառապետի օգնականը, — մենք բոլորս համաձայնուել ենք թոյլ չը տալ նրան ցուցակագրել քսան տարեկաններին եւ չը տալ սօլդաթ. թող առաջ ուրիշ գիւղերն ցուցագրեն, յետոյ մերը»։ Ներկայ եղողներն ընդունում են այս առաջարկութիւնն եւ բոլորն համաձայնում են։

Երկրորդ օրը, այն է յունիսի 17 ին, Մօրէնցը գալիս է Տաթեւի հայոց վանքը, որ գիւղից մի փոքր հեռու է եւ իջեւանելով վանահայր Ղալամեան վարդապետի մօտ, իր հետեւակ երկու կօզակներին եւ երկու եսավուլներին ուղարկում է գիւղն իջեւանելու։

Այդ օրը հունձքի ժամանակ լինելով, Տաթեւի բոլոր գիւղացիները դաշտերումն էին եւ գիւղի մէջ մնացել էր միայն տանուտէրի օգնական Յարութիւն Մինասեանը։ Վերջինս կօզակների պահանջմամբն տալիս է նրանց բնակարան եւ ինքն գնում է նոցա ձիերի համար խոտ բերելու։ Կօզակներին եւ եսավուլներին տուել էին մի բընակարան, որ մօտ էր այրի Աննա Թաթունցի տնից. այդ կինը բաւական ունեւոր եւ ազդեցիկ մի պառաւ է գիւղում, եւ շատ թոռներ ունի, որոնք մնացել են իր որդուց, որն ռուս-տաճկական պատերազմի ժամանակ կամաւոր զինուոր գնալով այնտեղ սպանուել էր։ Հազիւ ձիաւորները իջան իրենց ձիերից, երբ նրանց տեսնելով Աննա Թաթունցի տասնամեայ թոռն, լալով սկսում է գոռալ եւ կանչել իր տատին. «Տատիկ, եկել են մեզ սօլդաթ տանեն»։ Աննան իսկոյն թռչում է բակը, հանում է ցանկապատից մի ձող եւ սկսում է աղաղակել. «Եկել են սօլդաթ տանեն. հալածենք դրանց, բաւական է, որ մի որդիս մեռաւ. թոյլ չեմ տար որ միւսներն էլ ըսպանուին»։ Նորա աղաղակը նշան եղաւ, ի քթթել ական դուրս թափեցին ամեն կողմից քարերով և ձողերով կանայք, որոնք շրջապատելով կօզակներին եւ եսավուլներին սկսեցին վանել նրանց, մի և նոյն ժամանակ գանահարել։ Ձիաւորներն իսկոյն փախան դէպի վանքը. նրանց ետեւից վազում էր խուռն բազմութիւն կանանց եւ մանկանց մօտ 100-150 թւով. թէեւ երբ բազմութիւնը ձիաւորներին հասնելու վրայ էր, Մինասեանն եւ տեղական բէկ Խուդաբալ-բէկ Օրբէլեանը գալիս են եւ սկըսում յորդորել գիւղացիներին յետ կենալ, բայց իրենք եւս գանահարվում են։ Բազմութիւնը հալածում է ձիաւորներին մինչև վանքի դուռը։ Այդտեղ դուրս է գալիս վանահայր Ղալամեանցը եւ նոյնպէս յորդորում է յետ կենալ, խաղաղել, բայց բազմութեան միջից պատասխանում են թէ մեր դժբաղդութեան պատճառը դուք հոգեւորականներդ էք, որովհետեւ դուք աջակցում էք տէրութեան որ մեր զաւակներին սօլդաթ տանեն։ Ղալամեան տեսնելով որ իր խորհրդին չեն անսում, մըտնում է վանքը եւ փակում է վանքի դըռները ժողովրդեան առաջ։ Բազմութիւնը մի քանի ժամանակ մնում է դրան առաջ, գոռալով թէ թոյլ չի տայ ոչ ոքի որ իրենց զաւակներին տանեն եւ ապա ինքն իրան ցրվում է։

Հետեւեալ օրը, յունիսի 18ին, Տաթեւացի Պօղոս Առաքելեանը վերադառնալով երեկոյեան այգիներից, հաղորդում է թէ գաւառապետը գալիս է Տաթեւ։ Անմիջապէս Տէր Սիմէօն քահանայն կանչում է գիւղի գզիրը (չօվուշ) եւ հրամայում է նորան մունետիկ կանչել գիւղում, որ բոլորն «դուրս թափուին»։ Մի վայրկենում ահագին ամբոխ կազմուեց կանանցից եւ տղամարդերից եւ այրի Աննա Թաթունցի հրամանատարութեամբ այդ ամբոխը փայտ եւ գաւազան ի ձեռին դուրս եկաւ գիւղից եւ գնաց կանգնեց ճանապարհի մէջ, որպէսզի արգիլէ գաւառապետին գիւղը մըտնել։ Գաւառապետն լսելով այդ խռովութիւններն, այլ եւս փոխում է դիտաւորութիւնը եւ վերադառնում է ճանապարհի կիսից, թէեւ իր բեռն եւ իրերն արդէն ուղարկած է լինում։

---

[1]) Եղբայր այն Աթաբէկեանի, որ վերջին կաթող. ընտր. ժամանակ պատգամաւոր էր։

[1]) Այս գիւղն իր անունն առել է հռչակաւոր Տաթեւ վանքից, որից երկու վերստ հեռաւորութիւն ունի եւ պատկանում է վանքին։

Ամբոխը բռնելով բեռնը, որն բերում էին Ասրի եւ Աւագ եսավուլները, սկսում է քարեր ձգել նրանց վրայ, ուստի եսավուլները թողնելով բեռնը փախչում են դէպի վանքը։ Կէս ժամ յետոյ ամբոխը հանդիպում է եսավուլների գլխաւոր Գրիգոր-բէկ Օրբելեանին, որի վրայ նոյնպէս քարեր է ձգում եւ որն նոյնպէս խոյս է տալիս դէպի վանքը։ Վանքի դռները դարձեալ փակվում են, ամբոխը դարձեալ խռնվում է վանքի առաջ եւ պահանջում է որ Մօրենցը հեռանայ։ Մի ամբողջ ժամ բազմութիւնը կանգնում է եւ յետոյ ցրվում, բայց առանց ուրիշի միջամտութեան։ Պէտք է ասել որ Պ. Մօրէնցը չէ երեւում ամբոխին ո՛չ յունիսի 17ին եւ ոչ 18ին, ոչ որին ամբոխից չէ տեսնում եւ ոչ մի միջոցի չէ ձեռնարկում ամբոխը ցրուելու համար։ 19ի գիշերը, ժամը երկուքին (կէս գիշերից յետոյ) Պ. Մօրէնցը ծածուկ հեռանում է վանքից եւ գնում գաւառապետի մօտ։

Քննութիւնը ապացուցել է, որ գլխաւորապէս՝ ժողովուրդը դէպի ընդդիմութիւն դրդողը եղել է Տէր Սիմէօնը։ Նա յունիսի 17ին, երեկոյեան, գզիր Մկրտիչեանի միջոցաւ կանչում է իր ծխականներին իր մօտ, բայց յայտնի չէ ի՛նչ է խօսում նրանց հետ։ Յունիսի 18ին Տէր Սիմէօնը միւս երեք քահանայների հետ կատարում է երեկոյեան ժամասացութիւնը եւ երբ միւս քահանայները դուրս են գնում եկեղեցուց, նա մնում է ծխականների հետ այն պատրուակաւ թէ պէտք է խաչը տայ նրանց համբուրելու, բայց դրա փոխարէն սկսում է քարոզել ժողովրդեան (մօտ յիսուն մարդ է լինում եկեղեցում) հետեւեալ խօսքերով։ «Ամուր կացէք, մի տուէք ձեր որդիներին սօղոթ լինելու, ոչ ոքի չը մատնէք, որովհետեւ ամբողջ հասարակութիւնը պատժել չեն կարող, բայց առանձին անհատներին կարող են պատժել, ինձ մի հատ որդի ունիմ, բայց ես պատրաստ եմ իմ այդ միամոր զաւակն իմ ձեռքով սպանել, քան սօղոթ տալ»։ Այդպիսի խորհուրդներ տալիս է Տէր Սիմէօնը եւ յունիսի 18ին, երբ ծխականները հաւաքվում են իր բակը։ Այդ մի եւ նոյն օրը երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, աղջամուղջին Տէր Սիմէօնը զանգակահարութեամբ ժողովում է ծխականներին եկեղեցի։ Իսկ կէս գիշերին Տաթեւացիք դարձեալ հաւաքվում են նրա մօտ եւ նրա դրդմամբ հասարակութիւնը կանչելով գիւղի բոլոր պաշտօնականներին, որոնց մօտ դըրնվում են թագաւորական կնիքները, խլում է նրանցից այդ կնիքները։ Այդ բանը անում էին այն նկատումով, որ կնիք ունեցող անձինքը, ինքնագլուխ, առանց հասարակութեան, կնիքը չը խփեն ո՛ր եւ է թղթի վրայ եւ հասարակութեան անունով թղթեր չը գրեն. բացի դրանից, հասարակութիւնը բանտարկում է իր տան մէջ տանուտէրին, որպէսզի նա չը կարողանայ գընալ Պ. Մօրէնցի մօտ։ Կնիքներն պաշտօնական անձերի ձեռքից խլում է Տէր Սիմէօնը եւ տանում պահում եկեղեցւոյ մէջ։

Տաթեւցիների իշխանութեան դէմ գործած այս ըմբոստութեան մասին գաւառապետը հեռագրով յայտնում է Գանձակի նահանգապետին, որն ճամպարում է գալ Գեօրիս գիւղը իր հետ բերելով երկու հարիւր կօզակներ։ Տաթեւցիներն իմանալով նահանգապետի գալուստը, բոլորն գլխները ծռած դիմում են նրան եւ ծնկաչոք թողութիւն են խնդրում[1]։ Դրանից յետոյ անարգել կազմվում են Տաթեւ գիւղի զինուորագրական ցուցակներն։ Ահա այս անցքերն առիթ են լինում ամբաստանութեան ներքոյ ձգելու հետեւեալ Տաթեւցիներին, իբրեւ գրգռիչներ ըմբոստելու իշխանութեան դէմ, — Աննա Թաթունցին, Տէր Սիմէօն քահանային, Սուլէյմանովին, Անդրէին, Յովհաննէս եւ Պօղոս Առաքելովներին։ Այդ ամբաստանեալներից ոչ մինը իրան յանցաւոր չը ճանաչեց եւ իրանց տուած բացատրութիւնները խիստ անհաւանական են. սակայն ամբաստանութեան հիմն ծառայում է Օրբելեան տաղնուական ի՝ցցմունքը[2], որն ճշմարտութիւնն երեւան է հանել։ Օրբելեանի վկայութեամբ հաստատվում է որ ապստամբութեան գլխաւոր գրգռիչ եղել է Տէր Սարգիսեան քահանայն։

Այդ բոլորի հիման վրայ Տաթեւ գիւղի բնակիչներից այրի Աննա Թաթունց, Յովակիմ Սուլէյմանով, Յովհաննէս Առաքելով, Պօղոս Առաքելով եւ Քէլան Անդրէէվ եւ Տաթեւ գիւղի Ս. Մինաս եկեղեցւոյ աւագքահանայ Տէր Սիմէօնը ամբաստանվում են առաջին հինգը նրանում որ իմանալով իշխանութեան դիտաւորութիւնը զինուորագրական ցուցակներ կազմելու, գրգռել են գիւղացիներին ընդդիմանալ եւ թոյլ չը տալ Մօրէնցին գիւղը մտնել. Աննա Թաթունց հաւաքելով կանանց բազմութիւն, հալածել եւ գանահարել է տուել կօզակներին, այսինքն այդ հինգն ամբաստանվում են մի այնպիսի յանցանքի մէջ, որ կանխատեսուած է պատժական օրինագրքի 269 րդ[3] յօդուածի մէջ. իսկ վերջինը՝ Տէր Սիմէօն քահանայն, ամբաստանվում է նոքա մէջ, որ յունիսի 18ին հրապարակաբար, եկեղեցու մէջ, քարոզել է ժողովրդին ընդդիմանալ կառավարութեան եւ զանգակները խփելով հաւաքել է ծխականներին ու յորդորել ապստամբական ցոյցեր անել, մի յանցանք, որ պատժվում է պատժական օրէնքի 269, 274[4] յօդ.»։

Ամբաստանական ակտը վերջացաւ։

Նախագահ.— Ամբաստանեալներ, ճանաչո՞ւմ էք ձեզ մեղաւոր այդ յանցանքի մէջ։

Ամբաստ.— Ո՛չ, չենք ճանաչում։

Սկսվում է վկայների հարցուփորձը. կանչուած 18 վկայներից ներկայացել են 14ը, երեքը մեռել են, մինը չէ եկել։ Հայ, ռուս քահանայներն եւ թուրք մոլլան կատարում են իւրաքանչիւրն իր դաւանութեան երդման ծէսը։

Պէտք է ասել, որ այդ վկայների մեծ մասը նախնական քննութեան ժամանակ վկայել են ոչ յօգուտ ամբաստանեալների. նոքա ցոյց են տուել, որ, ճշմարիտ, Տէր Սիմէօն քահանայն գրգռել է ժողովուրդը դէպի ապստամբութիւն, որ նա կէս գիշերին, զանգակները խփելով, ժողովել է բոլորին եկեղեցի եւ քարոզել. որ Աննա Թաթունցը հալածել է խուռն բազմութեամբ կօզակներին ելն. մի խօսքով, որ գիւղացիք նախապատրաստուած են եղել ապստամբութեան։ Ամենավատ վկայութիւնն տուել է Օրբելեան Խուդաբախտի-բէկը, Օրբելեան հին սերմի ժառանգներից մին։ Սակայն դատարանի առաջ, այդ վկայները, մինչեւ անգամ Օրբելեանը բոլորովին ուրիշ կերպ վկայութիւն տուին, հակառակ առաջին վկայութեան։

Նախ և առաջ հրաւիրուեց վկայութիւն տալ գաւառապետի օգնական Մօրէնցը (ռուս), նա, որին գիւղացիք ընդդիմութիւն էին ցոյց տուել։ Մօրէնց, հաստատելով, որ, ճշմարիտ, գիւղացիք թոյլ չէին տուել կազմել ցուցակները, մի և նոյն ժամանակ յայտնեց, որ իր խորին համոզմունքով, գիւղացիների այդ ըմբոստութիւնը նախամտածուած չէր, այլ լոկ արդիւնք նոցա տգիտութեան, թիւրիմացութեան եւ գլխաւորապէս այն հանգամանքի, որ իշխանութիւնը առաջուց չէր հոգացել բացատրել նրանց նոր օրէնքի էութիւնը։ Մօրէնց յարեց որ Տէր Սիմէօնի մասին ոչինչ չէ կարող ասել, քանի որ փակուած լինելով վանքում, ոչինչ չէր տեսել, եւ չէր լսել։

Այսպէս հետզհետէ հարցուփորձի ենթարկուեցան հետեւեալ վկայները, 1. Մէլիք Թանդիեան, 2. Խուտաբաշի-բէկ Օրբէլեան, 3. Տանուտէր Մինասեան, 4. Կարապետեան, 5. Ղազար Մկրտչեան (չօվուշ)։

Այս վկայների ցուցմունքն, համարեայ միաձեւաց. ահա ինչ էր տաւանանում։ Տաթեւը լեռների մէջ մի առանձնացած գիւղ է եւ շատ քիչ յարաբերութիւն ունի ուրիշ տեղերի հետ. գիւղացիք ոչինչ չը գիտէին, որ հրատարակուել է նոր օրէնք զինուոր առնելու մասին, միայն զանազան ձայներ էին տարածուած, թէ զինուոր տանելու են բոլորին անխտիր եւ չափահասներին եւ անչափահասներին եւ կանանց։ Այդ պատճառով Տաթեւացիք վըճռում են որ մինչեւ օրէնքի էութիւնը չը հասկանան եւ չ'իմանան, որ ուրիշ տեղի գիւղերն եւս ընդունել են այդ օրէնքը, թոյլ չը տան ցուցակ կազմել։ Երբ Մօրէնցի գալը իմացան, քահանայն մի քանի անգամ ժողովեց հասարակութիւնը եւ խորհուրդ արին գնալ Մօրէնցի մօտ եւ նրանից տեղեկութիւններ իմանալ։

Երբէք քահանայն չէ դրդել ընդվզել ռուս տէրութեան դէմ, այլ յորդորել է իմանալ նախ, ճշմարիտ, կա՞յ այդպիսի մի նոր օրէնք։

Պրոկուրոր.— Պահանջում եմ, որ կարդացուի վկայների տուած ցուցմունքը քննիչին, որն բոլորովին հակառակն է նոցա այժմեան ասածին և թող բացատրեն այդ հակասութեան պատճառը։

Վկայները պատասխանելով բացատրում են, որ երբ նահանգապետը կօզակներին վաշտով եկաւ Տաթեւ, մենք բոլոր գիւղացիներս կարծում էինք թէ ահա բոլորիս կը քշեն Սիբիր, բոլորիս կը կորցնեն. թէ գաւառապետն եւ թէ նահանգապետի մօտ գտնուող հայ աստիճանաւոր Բախշի-բէկ Ասրիբէկեանը*) համոզում էին մեզ, որ մենք, եթէ կամենում ենք ազատուել կո-

---

[1]) Սակայն մասնաւոր տեղեկութիւնք հակառակն են հաստատում. Տաթեւցիք հնազանդում են միայն այն ժամանակ, երբ նահանգապետը թնդանօթներ է բերել տալիս։ Ծ. Ց.

[2]) Սիւնեաց աշխարհի ազնուական դասը, ինչպէս երեւի, դեռ չէ դադարել իր ծոցում մատնիչներ ունենալուց։

[3]) Այդ յօդուածը տրամադրում է աքսոր Սիբերիա։

[4]) Այդ յօդուածները տրամադրում են տաժանակիր աշխատանք (galères)։

*) Մի դաւաճան հայ, որ զբաղուած է մատնութիւններով։

բըստից, փրկել ամբողջ հասարակութիւնը Սիբիր աքսորուելուց, թող յայտնենք որ ճշմարիտ մենք յանցաւոր ենք, բայց մեզ դրդել են մի քանի անձինք. բացի դրանից, քննիչը շատ բան իր կողմից աւելացրել է։ Վկաների ասածից յայտնուեց շատ պարզ կերպով, որ տեղական իշխանութիւնը, մանաւանդ գաւառապետ Կարաբէֆը (հայ-կաթոլիկ եւ յայտնի իր հայատեցութեամբ) շատ աշխատել են, որ Տաթեւում ծագած խռովութեան ապստամբութեան կերպարանք տան կառավարութեան առաջ, սարսափի եւ երկիւղի տակ են ձգել գիւղացիներին և ստիպել նրանց սուտ վկայութիւններ տալ։

Պրօկուրօրն տեսնելով որ գործը վատ ընթացք է ստանում, այն է ի վնաս ամբաստանութեան եւ երեւան են լինում դատարանի առաջ կառավարութեան խայտառակ արարքներն եւ զգալով, որ միւս վկաներն եւս նոյնը պիտի խօսին, յայտնեց, որ հրաժարվում է այլ եւս միւս վկաներին հարցնելուց։ Դատարանն եւս ազատեց միւս վկաներին։

Նախագահ.— Դատաստանական քննութիւնն վերջացած լինելով, այժմ սկսվում է ճառախօսութիւնը։ — Տէ՛ր Պրօկուրօր, ինչ ունիք ասելու յօգուտ ամբաստանութեան։

Դահլիճի մէջ խռնուած բազմութիւնը սրում է ականջները. Պրօկուրօր Ռէցկօյի ճառից մի արտաքոյ կարգի բան է սպասվում. արդէն երեկոյեան մութը կոխած լինելով, ճրագները վառում են։ Ամբաստանեալներից՝ Աննա Թաթուեց պառաւը, որն բնաւ չէ հասկանում եւ ուշ չէ դարձնում թէ ինչ է անցնում իր շուրջը, հանդարտ [illegible] ռում որդուն։

Դատախազ Ռէցկոյ.— Տեա՛րք դատաւորք, ներկայ գործն այն սովորական գործերից չէ, որոնք ամեն օր տեղի են ունենում. նա մի արտասովոր գործ է, նա աւելի քաղաքական գործի եւ յանցանքի բընաւորութիւն ունի, ուստի եւ նրա վրայ պէտք է առանձին ուշադրութիւն դարձընել։ Նա մինչեւ անգամ մի գիւղի, մի հասարակութեան գործ չէ, այլ վերաբերում է ո՛չ թէ միայն մեր գաւառի, այլ և ամբողջ հայ ազգին. նա ցոյց է տալիս այն ձգտումն, որ հայ ազգն ունի դէպի ապերախտութիւնն որն նա կամենում է արտայայտել դէպի այն տէրութիւնն, որի շնորհն եւ գութը վայելում է։ Ձեզ յայտնի է, որ գործի ըսկզբում մինչեւ անգամ Հայոց հոգեւոր ծայրագոյն իշխանութիւնը կասկածի տակ էր ընկել իբրեւ մասնակից այդ գործին։ Թէեւ այսօր ամբաստանելոց նստարանի վրայ նստած են միայն վեց հոգի, բայց գործին մասնակից են եղել բոլոր գիւղացիք եւ որովհետեւ ամբողջ մի հասարակութիւն պատժել անկարելի էր, ուստի դատաստանի ենթարկուեցան միայն գըլխաւոր գրգռիչներն։ Արդ, պարոն դատաւոր, պատժելով ներկայ ամբաստանեալներին, դուք մի եւ նոյն ժամանակ պատժած կը լինէք ամբողջ հասարակութիւնն և արմատախիլ կ'անէք ապստամբական այն ոգին, որ սկսել է զարգանալ տաղացւոց մէջ։ Թէ արդարեւ, հայ ժողովուրդը մի առանձին կերպով հետաքրքրվում է այս գործով եւ նշանակութիւն է տալիս նրան, այդ ապացուցանվում է եւ նրանով, որ այսօր այս դահլիճը լի է քաղաքիս հայ ինտէլլիգէնցիայի անդամներով։ Ամբաստանութիւնը շատ փաստեր է ձեռք բերել, որոնք ապացուցանում են ամբաստանեալների կատարեալ մեղաւորութիւնը, բայց եթէ այդ փաստերն այսօր, դատարանի առաջ չհաստատուեցան եւ վկաներն իրենց առաջուայ ասածի բոլորովին հակառակը ցոյց տուին, այդ դեռ չէ նշանակում թէ նոցա ասածը ուղիղ է։ Ես կարծեմ, դուք եւս, պարոն դատաւորներ, համոզուեցէք որ այդ վկաները սուտ են խօսում, եւ պատճառը պարզ է. նոքա բոլորը հայեր են, ամբաստանեալների «ոսկր յոսկերաց» եւ «մարմին ի մարմնոց»։ Վկաներն, իբրեւ եւս հայեր, կամենում են պաշտպանել իրենց ազգն ո՛ր եւ է մեղադրանքից եւ այդ պատճառով չեն խղճահարվում մինչեւ անգամ սուտ խօսել հակառակ մինչեւ անգամ իրենց երդման։ Ուստի ես լիայոյս եմ, որ դատաստանը իր հեռատեսութեամբ չի խաբուի, այլ ամբաստանեալներին մեղաւոր ճանաչելով արժանի պատիժը կը տայ նրանց։

Այս խօսքերից յետոյ Պ. դատախազն սկսում է քննել վկաների ցուցմունքը։ Նորա ամբաստանական ճառը տեւում է կէս ժամ, որից յետոյ նախագահն առաջարկում է պաշտպանին խօսել.

Պաշտպան Խաչատրեան.— Գործի էութեան մասին խօսելուց առաջ, ես սեպուհ պարտաւորութիւն եմ համարում նախ իբրեւ հայ եւ ապա իբրեւ հաւատարիմ հըպատակ, հրապարակաւ և բարձրաձայն բողոքել այն զրպարտութեան դէմ, որ Պ. պրօկուրօրն յանդգնում է ձգել Հայ ազգի եւ էջմիածնի երեսին. նա թոյլ է տալիս իրան անկիւնից քար ձգել մի հաստատութեան դէմ, որ իր ամենաջերմեռանդ հըպատակութեամբ առ ռուսական գահն հըռչակաւոր է։ Պատմութիւնը կենդանի ապացոյց է, որ էջմիածինը քանիցս մինչեւ անգամ արիւն է թափել ռուսական զէնքի յաջողութեան համար. նա պատսպարել, պաշտպանել է իր պատերի մէջ ռուսական զօրքը. երբէք Հայ ազգի հաւատարմութիւնը կասկածի տակ չէ կարող ընկնիլ։

Ապա պաշտպանը մի առ մի ցրում է ամբաստանութեան կէտերն, ամենայն իրաւամբ նկատել տալով, որ վկաների տըուած առաջին ցուցմունքը տեղի է ունեցել ճնշման, երկիւղի եւ սարսափի ներքոյ, եւ եթէ ներկայ գործի մէջ կայ մի յանցաւոր, այդ եւս ո՛չ թէ ներկայ խեղճ ամբաստանեալներն են, ո՛չ թէ Տէր Սիմէօն քահանայն է, որ կամեցել է իր հօտի դատը պաշտպանել, այլ գաւառական վարչութիւնն է, տեղական իշխանութիւնն է, որ իր անընդունակութեամբ տեղիք է տըւել այդքան խռովութիւնների։ — Ի վերջոյ պաշտպանը խնդրում է որ պարոն դատաւորներն ի նկատի ունենալով որ դատախազը գործին բոլորովին քաղաքական կերպարանք է տալիս, իրենց անկողմնակալ եւ արդարադատ վճռով ապացուցանեն, որ նորա ամբաստանութիւնն անհիմն է և անտեղի։

Նախագահ.— Դատարանը հեռանում է խորհրդակցելու եւ իր վճիռն արձակելու։

Ուղիղ մի ժամ տեւում է այդ խորհըրդակցութիւնը. ամենքն անհամբեր սպասում են գործի ելքին եւ վճռին. Աննա Թաթուեց, չը կարողանալով այլ եւս դիմանալ, ննջում է։

Ճիշդ ժամը 10ին գիշերուայ, դատաւորները դուրս են գալիս եւ նախագահն արտասանում է վճիռն, որով բոլոր մեղադրեալներն ճանաչվում են անպարտ և համարվում են ազատ։ Ուրախութիւնն ընդհանուր է։ Բոլորը դիմում են արիաջան Տէր Սիմէօն քահանայի աջն առնելու։

ՇՈՒՇԵՑԻ

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Մասիս ազգօգուտ գործ մը կը կատարէ ժամանակէ մ'ի վեր, հրաւէր կարդալով հըրատարակել տեղական արհեստները խրախուսելու նկրտող յօդուածներ։ Օգուտ քաղելով պարագայէն, կը փութանք հանրութեան ուշն հրաւիրել մեր ստացած տեղեկութեանց վրայ հիմնուած հետագայ տողերուն նկատմամբ։

Ծանօթ է արդէն մայրաքաղաքիս դրամական անձկութիւնն, զոր կուգան ծանրացունել Սկիւտարի եւ Արնաւուտքէօյի հրդեհներուն պէս պարբերական աղէտներ։ Հազարաւոր Պոլսեցի ընտանիքներ առանց ապրուստի մնացած են եւ նիւթապէս կամ բարոյապէս մոխրոյ վրայ նստած են։ Այս թշուառութեան պատճառն ի՞նչ է, թէ ոչ գործի պակասութիւնն. Այո՛, միմիայն անգործութեան պատճառաւ է որ կը տեսնենք շատ ընտանիքներ աղքատութեան մէջ իյնալ եւ մուրացկանութեան կամ անբարոյականութեան դիմել ակամայ։ Լոկ արեւելեան գործագործութիւնն յիշելով, տեղն է սակայն ըսելու. «Գործ կայ, գործող չը կայ։»

Այսօր, Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ, ամենասուղ գիներով կը ծախուին արեւելեան գորգերն, եւ փոքր հարստութեան մը տէր եղող ընտանիքներն իսկ արեւելեան ճաշակով կահաւորուած սենեակ մը կ'ունենան։ Այդ գորգերը կը շինուին Հայաստանի հարաւային կողմերն, ինչպէս նաեւ Քրդաստանի մէջ, եւ այլուր. բայց հարկ չէ մեզ այդչափ հեռու երթալ սովրելու համար գորգի արհեստն։ Գանք Զմիւռնիոյ մօտ, Գուլայի աւանին մէջ, ուր նաեւ կը շինուին սքանչելի գորգեր։ Երբ ճամբորդը կը մտնէ ի Գուլա, կը զգայ անմիջապէս թէ դիւրակեաց կեդրոնի մը մէջ է։ Կը տեսնէ կիներ, որք իրենց տանը դրանն առաջ նստած, ասեղնագործութեամբ կը պարապին։ Այդ կիները մետաքսեայ հարուստ զգեստներ հագած են. թանկագին գլխանոցներ կը զարդարեն իրենց ճակատն. ոսկի եւ մարգարիտ մանեակներ կը պատեն իրենց վիզը։ Ճամբորդը կը տեսնէ նաեւ գեղեցիկ եւ հոյակապ շէնքեր, եկեղեցիներ եւ կրթարաններ, զորս կառուցած են մեծահարուստ անձինք։ Բայց այդ անձինքն ի՞նչպէս հարստացած են. — միայն գորգագործութեամբ։ Կիներ և օրիորդներ կը հանեն իրենց և իրենց ընտանեաց ապրուստը միայն գորգ շինելով, եւ այդ օրիորդներէն ոմանք կը գործեն այնպիսի գորգեր որ անոնցմէ մին կը բաւէ իրենց օժիտը լինելու համար։

Գուլայի, այս գործաւորուհիներուն մեծամասնութիւնը յոյներէ եւ թուրքերէ կը բաղկանայ, մահմետական օրիորդները կը շինեն իրենց հարսանեաց համար շքեղ գորգեր, որոնց վրայ կը ձեւացունեն ընդհանրապէս կանթեղի պատկեր մը։ Այդ գորգերն իրենց տիրուհեայն մեռնելէն յետոյ

կ'ընծայուին տեղւոյն մզկիթին, այնպէս որ Գուլայի մզկիթն իւր պարունակած գործերով այսօր պատկառելի հարստութիւն մը կը ներկայացունէ, վասն զի այդ գործերուն ամեն մէկն առ նուազն երեսուն օսմ. ոսկի կ'արժէ։

Արդ, Գուլայի մօտ կը գտնուի Ուշագ անունով հայաբնակ գիւղաքաղաք մը, ուր կը գործուին միայն կոշտ կապերտներ (քիլիմ). այս պատճառաւ Ուշագի ժողովուրդը Գուլայի ժողովուրդէն շատ աւելի աղքատ է։ Կը տեսնուի ուրեմն թէ, միայն ազնիւ գործեր չինելով, ամբողջ՝ ժողովուրդ մը կրցած է հարստանալ։ Թող Պոլսեցիք հետեւին Գուլացւոց օրինակին։

Ունինք Բերայի մէջ նորահաստատ Արուեստանոց մը, ուր ութսուն հայ օրիորդներ ասեղնագործութեան կը պարապին. միթէ կարելի չէ՞ գորգագործութեան ճիւղ մ'աւելցնել հոն, քանի որ անցեալներս Աբէ-Էյ կը ծանուցանէր թէ Գերմանիայի արուեստանոցներէն մին իւր յայտագրին մէջ ներմուծած է արեւելեան գորգագործութիւնն. եւ միթէ արմենուհին գերմանուհիէն աւելի ճարտարարուեստ չէ՞։ Արդէն Պոլսոյ հայուհիները ձեռարուեստի համար շատ յարմարութիւն ունին, ինչպէս նաեւ մեծ ճաշակ։ Սամաթիոյ եւ այլ թաղերու հայուհիներուն պատրաստած ոսկեթել եւ մետաքսեայ այլ եւ այլ նուրբ աշխատութիւններն հիացում կ'ազդեն ցարդ։ Հետեւաբար, կ'առաջարկենք արեւելեան գորգագործութիւնը ծաւալել մեր ընտանիքներուն մէջ, ապահով լինելով որ այդ բաւական պիտի ըլլայ դիւրակեցութեան առաջնորդելու զանոնք։ Ուրեմն զրկենք ի Գուլա ուշիմ գործաւորուհիներ, որք հոն այդ արհեստը սովրին եւ գան զայն սովրեցնել իրենց ընկերուհեաց, կամ Գուլայէն գոհացուցիչ թոշակով բերել տանք գործաւորուհիներ, որք սովրեցնեն իրենց արհեստը մեր ժրագլուխ օրիորդներուն։

ՄԻՔԱՅԷԼ Յ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒԻՆ (17)

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈԽԱԿՆԵՐ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

ԽԱ.

Ազնիւ ընթերցողաց ծանօթացնելու համար Սոսունի նոր կեսրայր Մխաթի Մրդարըն՝ յարմար առիթ կը համարիմ նորա կեանքի համառօտ պատկերը դնել հոս։

Սղերդի շրջակայ սարերէն՝ Ճամչօ անուն պատանի մը՝ թուականէս մէկ դար յառաջ՝ լքեալ եւ խեղճ վիճակաւ մը կուգայ Մոկաց այդ գաւառի Մելիք Նեթօյի տան խոտաղութիւն[1]) կ'ընէ մէկ քանի տարիներ՝ հաց ի փոր (միայն ինքզինք պահելու առանց վարձքի)։

Մեր կողմերը գրեթէ առածի կարգ է անցել է Սղերդցիների «Քէչալ (կնտակ) Փէլահների ճարպիկ շահամոլութիւնն» և Ճամչօն օժտեալ բնական այդ հանգամանքներով, եթէ կարելի է այսպէս կոչել, խոտաղութեան մէջ օրէ օր կը յառաջէ՝ ինչպէս ուշիմ ուսանող մը դպրոցի մէջ։ Մելիք Նեթօն երբ կը տեսնէ խոտաղ Ճամչօյի «պօղօր-Բէկն»[2]) եւ իր գործունէութիւն, կը բարձրացնէ նորա պաշտօնն նշանակելով զայն մանճկալ (գլխաւոր մշակ). վերջապէս մեր պատմութիւնը չերկարացնելու համար՝ փութանք ըսել թէ՝ Ճամչօն միշտ կը յառաջէ իր պաշտօնի մէջ եւ Մելիք Նեթօյի համակրութիւնը գրաւելով կը կարգուի նորա հետ զվաղ[3]) գուլամ (պահապան ծառայ)։

Ճամչօն երբ կը նկատէ որ՝ ինք իւր ակընկալած պաշտօնի գագաթնակէտն հասած է, եւ Մելիք Նեթօյի համարումը՝ նենգամիտ խորամանկութեամբ մը գրաւած է, այլ եւս կ'սկսի Մելիքի մերձաւոր բարեկամներէն Կիկօ անուն անձի դստեր հետ յարաբերութիւններ մշակել եւ օր մը ալ մէկ քանի քուրդ ընկերների օգնութեամբ այդ Պիլպուլ անուն աղջիկն առեւանգելով, Կարկառ գաւառակն անցնիլ, տեղւոյն Հասան աղա քիւրտի պաշտպանութեան ապաստանելով։ Կ'անցնին մէկ քանի տարիներ, եւ Ճամչօն կը ծնի Կարկառու մէջ միայն երկու զաւակ, որոց անդրանիկն է Մխաթի Մրդարն՝ եւ հազիւ թէ 35 տարուան ոտք կոխած, կը մեռնի նա, երեսի վրայ թողնելով իր փոքրիկ տղայքն ու խեղճ կինն։

Աւելորդ է ասել թէ՝ Պիլպուլի հայր Ըռէս (գիւղապետ) Կիկօն իր աղջկայ վատ վարմունքէն վերջին աստիճան նեղացած, երբեք չը կարեկցիր գէթ նորա այդ այրի կենաց եւ որբ զաւակաց։

Խեղճ Պիլպուլը՝ բոլորովին անտէր եւ անտիրական, կ'ստիպուի իւր թեւը ձգել մուրացկանութեան հըմբան (պարկ) ու կը մեծցնէ իր երկու փոքր տղայք։

Մրդարն տասն երեք տարու հասակին մէջ կը կորսնցնէ նաեւ իր դժբախտ մայրն եւ փոքրիկ եղբայրն, ու ինք կը մնայ բոլորովին անմխիթար։

Բ. գիւղի մէջ՝ միայն գեղջուկ փոքրիկ տուն մը ունէր Մրդարն՝ զոր իր հօր նուիրած էր Հասան աղան։ Ամեն օր արշալոյսը բացուելուն նա դուրս կը գայ՝ եւ գիւղացիների հետ օրական թեթեւ վարձքով մը աշխատութեան կ'երթայ, քանի որ տարուան եղանակներն երկրագործութեան յարմար կը գտնուի, իսկ ձմեռներն՝ իրեն ուտեստ եւ հագուստ հոգալու համար Բ. գիւղի Ըռէս Խլօյի տան մշակ կը դառնայ։

Ահա՛ այս միջոցաւ, նա ոչ հացի փարայ չի տար, այլ եւս զգեստի ալ պէտք չ'զգար։ 4-5 տարիներ վերջ հարիւր չորխիի (հինգ զրուշնոց) տէր կը դառնայ։

Ճամչօյի արիւն կը խռար միշտ Մրդարի երակներու մէջ, նա միշտ շահելու հետամուտ, իր այդ դրամագլուխը 500 զրուշ կ'սկսի տալ տոկոսով։

Տոկոսի սորաքածան տեսակներէն՝ բազդրեալ տոկոսն եւ սալաֆ կ'ընտրէ նա իրեն ճիւղ և կատարեալ խորամանկութեամբ կը մշակէ զայն. այնպէս որ՝ մէկ տարուան մէջ՝ իւր դրամագլուխը կրկնապատկելէ զատ՝ տասն հատ ոչխարի եւ երկու էգ օսթկու (հորթի) տէր կը դառնայ ու գիւղացիներէն միոյն դստեր հետ կ'ամուսնանայ։

Ամբողջ տասն տարիներ այդպէս վաշխառութեամբ կը յառաջէ Մրդարն. որու որ քանի զրուշ պարտք կը տայ, տարեկան նոյնքան տոկոս կ'ստանայ։ Շատ մը այրեր իրենց ամուսիններէն, զաւակներէն ու հայրենիքէն կը հրաժարին պանդխտութեան դիմելու եւ այդ անգութ վաշխառուի տոկոսների ծանրութենէն ազատելու։ Այդ գաւառակի բոլոր գիւղերը քիչ ժամանակամիջոցի մը մէջ կը դառնան նմա պարտապան, եւ ինք Մխաթն կը գրաւէ շատ մը հողեր ու կալուածներ, ու հարիւրաւոր տըներին կ'սպառնայ աւեր։

ԽԲ.

Տասն տարիներ կը բոլորին Մրդարի վաշխառութեան գործառնութեան վրայ, ու այդ որբիկ Մրդարն, հարիւր հազար զրուշի, երեք հարիւր գլուխ (հատ) ոչխարի՝ քանի մը աչխոյժ նժոյգների, ահագին ընդարձակութեամբ հողերի տէր եւ երեք որդւոյ հայր կը դառնայ։ Այդ ժամանակին երբ նա կը տեսնէ որ իր պարտապան գեղջուկներէ շատերն ի Պոլիս պանդխտութեան կուգան ու անյաջողութեան հանդիպելով իր պարտքերն եւ տոկոսները ղրկել կ'ուշանան, միտքը կը դնէ Պոլիս գալ, եւ իր առնելիքները ժողվել։

Ապրիլ ամսոյ վերջեր, երբ գարնան գեղածիծաղ դարձին հետ՝ Մոկաց լերանց թանձր ձիւները կ'սկսին հալուիլ եւ յորդ վտակներով ոռոգել այդ ձորերն ու հովիտներն, երբ տարագնաց թռչնոց սիրանուագ երամներ գարնան գալու հետ վերադառնալով կը գեղգեղէին գարնան դարձն բարով, այդ գաւառի ազգայիններէն շատերը՝ պատրաստուած էին թողնել իրենց տուն ու բուն եւ դիմել օտարութեան, Մրդարն ալ՝ այդ խղճալի ճամբորդ գիւղացիների հետ, ճամբայ կ'ելնէ։

Եւ տակայն Մրդարն որ կը համարուէր ամենէն հարուստ իշխան՝ բայց եկէ նայէ որ՝ այդ մարդն ամենէն խեղճ աղքատի մը նման ցնցոտիներ հագած թեւէն մաշէ հըմբան (պարկ) մը ձգած, այն պարտատէր եւ դժբաղդ գեղջուկների քաշէն ուտելով ու ապրելով կուգայ կ'իջնայ ի Ըստանպօլ։

Գիւղացի պանդուխտներն երբ կը լսեն որ Մրդարն Իստանպօլն եկած Ղասըմ փաշայի «Պալաբան» կեղտոտ խանն իջած է, իրենց ղուղայէ ամեն զարիպներն Նախրի պէս դողէ դող կելնեն կուգան Մրդարին ի տես։

Բայց տեսէք թէ ի՞նչպէս կը խօսին եւ խորհրդակցին իրարու հետ այդ դժբախտ պանդուխտներ, իրենց երկրի վաշխառուին յայց ելնելէն յառաջ։

Խնամի Կիկօ, դու լսե՞ր իս ինչ է եղիր։

Չէ՛ խօգիս, ի՞նչ կայ,

Հերէկ յիրկուն մեր Սախօ (Սահակու) հետ Պալապան խան գնացինք՝ իմ վերէն դիզուած երկու խարխր մաճիթի փօլօսի դավու խամոր (համար) մեր Ճամչօյի Մըրդարն տեսանք որ երկրէն եկիր էր։

Աղորդմայ (սոյզ) կ'ասիս, Կալախաչն*) էլ գիտայ, սուտ չ'եմ ասիր։

Աչգնայի (այնպէս է) խարկ է (հարկ է) օր (որ) երթանք զինք տեսնանք։

Իրթանք՝ պրաէ մըն՝ (իմ եղբայր) արջուն մալէլէ (փայփայանք) պէտք է ընել։

Պալէ (բայց) «դարտակ բրին բարեւ չի կայ» գիտես։

Էնտարգի (այնպէս է) լազէմ է օր իր

---

1 Եզներն կամ կովերն արածողի պաշտօնի անունն է։ 2 Շրջող։ 3 Այս բառը գործածուած տեղւոյն համաձայն իմաստով կարելի է ըմբռնել, թէեւ քրդերէն մեկնութեամբ կը նշանակէ սրամտութիւն։

*) Խիզանու Կինիկոր գաւառակի Խարխոյ հայ գիւղի առընթեր եղող մի ուխտատեղի է՝ որոյ Կալախաչ անունը կուտան այդ երկրացիք։

խամար փառու մը (նուէր) տանինք, թէ չէ աղէկ չէ, բլի արջ որ բարկանայ, կորեկի առտերու տիրոջ քուն չը կայ։ Մրդարն էլ մեր ղազի (գաւառի) քեաթխուտան է (իշխան) է։

Օր աշգնայի, առնենք չուխա (ասուի) անթարի (բամկոն) մը. տանինք դնենք ուր էրջեւ։

Մինակ անթարի մը քիչ ի, խոգիս, ուր խամար (իրեն համար) ճրխտակ (զոյգ) մը էլ աղէկ կոնտռայ (կօշիկ) տանինք։

Դու գիտիս (գիտես) փառք Աստուծոյ դու թէր ակըլ ես (կատարեալ խելացի ես)։ Տասն մաճիթէն քամալ (արժէք) չ'ունի, լէ բալէ, բալէ, (բայց սակայն) Մըրտարի պէս մարդու մի խաթըր կոտրել ռահաթ բան չէ։

Գրեթէ Մոկաց այդ գաւառակի բոլոր պանդուխտներն, առաստ նուէրներով կ'երթան ի տես Մրդարին։

Հազիւ թէ երկու ամիս կը մնայ ի Պոլիս Մրդարն եւ այդ երկու ամսուան մէջ, առանց մուրհակի եւ սէնէթի, ասոր անոր վրայ իր ունեցած քառասուն հազար ղրուշ առնելիքները առնելէ զատ՝ գրեթէ անոր կիսուն չափ ալ հասոյթ աղքատ պանդուխտների նուէրներէն (իրենց բառով էհսանէրէն) կը գոյացնէ, առանց մէկ դըրամ ծախք ընելու, ամեն օր ասոր անոր կողմէն կը կերակրուի եւ կը պատուուի։

Մեր Մրդարն՝ երբ կը տեսնէ որ իր մտածածէն աւելի եւ աւելի շահ մը ձեռք կը բերէ, եւ մանաւանդ կ'ստուգէ որ իր պարտապաններէն մէկ քանին՝ Բերլայի մէջ կը գտնուին համալսարթիւն ընելու համար՝ միտք կը դնէ, մինչեւ Հալէպ ալ երթալ, այն տեղն ալ իր կողոպուտան ի գործ դնելէ ետք, Երուսաղէմն անցնիլ ձրի մտի մ'ալ լինիլ, ու երկիրը վերադառնալ. ուստի օր մ'ալ կը յայտնէ թէ «Ախբը քանի որ մինչերս Ըստանպոլն եկիր իմ, կ'ուզիմ որ Սուրբ Յերուսաղիմն էլ երթամ, տունէն (աշխարհը) մախ ու մեռնիլ կայ աղբատանք (եղբարք)։»

Երբ իր հայրենակից պանդուխտները կը լսեն Մրդարի այդ նպատակը, բարեպաշտական եւ նիւթական նկատումներով, դարձեալ կը շարունակեն դալ տեսնել իրենց Մրդարն, այս անգամ դրամական նուէրներով։

Քեռի Մրդարը, կը կոչուի այն ատեն Մխսի Մրդար, եւ կը հաւաքէ չորս հազար ղրուշէն աւելի ճանապարհի ծախք։

Մխսի Մրդարն, իր հաւաքած թէ՛ ուխտագնացութեան եւ թէ միւս դրամներն ի մի դումարելով՝ լիրայի կը վերածէ, ու փամբէ (գօտւոյ) մը մէջ լեցնելով իր մէջքի վրայ կը կապէ, առաջին ցնցոտիները դարձեալ հագնելով ու երկրի պարկը թեւը ձգած կամացուկ մը կ'երթայ նաւը կը նըստի, նաւավարձքն ալ ուրիշի մը վճարել տալով։

Ուրեմն դէ երկար բարակ թուել այն ամեն ձեւերն ու դարձուածներն զորս Բերլայի մէջն ալ Պոլսոյ նման ի գործ կը դնէ Մխսի Մրդարն. միայն համառօտ մը պատմենք թէ, այս վարպետորդին, Բերլայի մէջ եղող այն խղճալի ղարիպ բեռնակիրներէն իր վաշխն եւ դրամը, իր մատնատոմարով*) ճշդածին պէս առնելէ ետք, կարգը կը բերէ Երուսաղէմ ուխտի գնալու խորհրդին ուշէն կորզէ անոնցմէ ալ զանազան դրամական եւ նուէրներ, որոց ամենն ալ «սառու լիրայի» կը փոխէ, ինչպէս կ'ըսեն իրենք, ու քամարի մէջ եղող միւս լիռաների մօտ կը ղրկէ։

Քանի մը օր ետք կը թողնի մեր Մխսին Բերլան ալ՝ դարձեալ առաջին կերպարանափոխութեամբ կ'երթայ կը նստի նաւը։

Ղ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

(Շարունակելի)

*) Գրել կարդալ չը գիտցող գիւղացիք ամեն մէկ հաշիւնին մոքերնուն մէջ մատներով կը հաշուեն կամ կտոր մը փայտի վրայ կը գծեն իւրաքանչիւր միութիւնն։

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ

Դեկտեմբեր 19էն 25

ԱՐՏԱՔԻՆ

Բարիզէն առնուած հեռագիրը կը ծանուցանեն թէ ծովային գործոց նախարար Պ. տը Մաշի հրաժարական տուած լինելով, Ֆրանս տեղական յաջորդեր է նմա։ Իսկ պատերազմական նախարար Լօժըրօ զօրավարին հրաժարման գրոյցը կը հերքուի։

—Սերպիոյ գործերը ծանր երեւոյթ մը կ'առնուն Սքուփչինային մէջ։ Արմատականք մեծամասնութիւն են, բայց Միլան Թագաւորն յիշխանութիւն չկոչեց Արմատականներն, այլ ինքնահնար եղանակաւ մը նախարարութիւն մը կազմեց։ Յորում երկու գլխաւոր անդամք են բանակին երկու գլխաւոր սպայք։ Կերպով մը պետական հարուած մ'է այս, որուն հետեւութիւնը պիտի լինի անշուշտ Սքուփչինային լուծումն։ Այս ալ կրնայ խռովութիւններ յառաջ բերել երկրին մէջ, զի չեն մոռցուած Արմատականաց ապստամբութիւնք քաղաքային եւ զինուորական իշխանութեանց դէմ եւ տեղի ունեցած արիւնհեղութիւնք ընտրութեանց առթիւ։

— Գերմանիոյ եւ Ռուսիոյ բանակցութիւնք եւս քան զեւս ուշագրաւ երեւոյթ մը կ'առնուն, թէեւ հեռագիրք շատ ըլլս չեն տար այս մասին, եւ թէպէտ, ի բացակայութեան եւրոպեան Սուրհանդակին, որ շաբաթէ մ'ի վեր չի հասնիր Դանուբ գետը սառած լինելուն, կարելի չէ ճիշդ գաղափար մը կազմել։ Բայց Պ. Ֆոն Շվայնից Վիլհելմ Կայսեր կողմէ Զարին քով ղրկուելէն ետքը, Շուվալով Նոմս Զարին կողմէ Վիլհելմ Կայսեր քով ղրկուեցաւ, եւ այս օրերս ալ Բեռլինս վերադարձաւ։ անշուշտ Գերմանիոյ Վեհապետին պատասխանները տանելու Ռուսիոյ ինքնակալին։ Կ'երեւի թէ երկուց Վեհապետաց միջեւ կարեւոր բանակցութիւնք տեղի կ'ունենան, որք թերեւս անակնկալ լուծումներ յառաջ բերեն Եւրոպիոյ քաղաքական արդի խառնաշփոթ կացութեան մէջ։

— Կը հաստատուի թէ Ռուսիոյ Վիէննայի դեսպանը, Լոպանով Իշխան, հաստիք տուեր է Քալնոքի Կոմսին թէ Ռուսիա խաղաղասէր քաղաքականութեան մը կը հետեւի։ Ցարեր է թէ ռուս զօրաց ի Կալիշիա համախմբումը թշնամական դիտմամբ չէ բնաւ։

—Գէօնիէլ Զայդոնէ կը կարծէ թէ քաղաքական կացութիւնը քիչ մը պիտի հանդարտի շնորհիւ այն բացատրութեանց զորս Տէրութիւնք կը փոխանակեն եւ տակաւին ունին փոխանակել։

—Վիէննայէ առ Տէպա ուղղեալ հեռագրոյ մը համեմատ, Քալնոքի Կոմս ի մտոյ Բեռլերսպուրկ պիտի երթայ, Ռուսիայէն ինչ ինչ զիջումներ ստանալու պաշտօնով, ի փոխարէն ուրիշ կարեւոր զիջումներու զորս Աւստրիա պիտի ընէ Ռուսիոյ։

— Պերլինէ կը ծանուցուի թէ Գերմանիոյ գահաժառանգ Իշխանը մերժեր է իրեն եղած առաջարկներն, ի մասին Խնամակալութեան մը հաստատման, եթէ յանկարծ մեռնի Վիլհէլմ Կայսրն։

— Ի Մասուա լուր տարածուած է թէ Հապէշաց Յովհան Թագաւորը, մեծ ոյժերով, կը քալէ Իտալացւոց վրայ։

— Մասուայէ կը ծանուցուի թէ Ռաս Ալուլա, նոր օգնութիւններ ստացած լինելով, սկսած է յառաջ խաղալ, Իտալացիները զարնելու համար։

— Պուլկարական խնդրոյն վերաբերող նենգեալ գրութիւնք, որք Բեռլսպուրկէն Պիզմարք Իշխանին ղրկուած էին ի քննութիւն, Ռուսիոյ Կայսրէն առնուած արտօնութեան համեմատ հրատարակեցան Գերմանիոյ պաշտօնական լրագրոյն մէջ։

— Պերլինէ առնուած տեղեկութեանց նայելով, Վիլհէլմ Կայսրն տմանորի առթիւ ընդունելով նախարարները, կառավարական բարձրագոյն պաշտօնեայներն եւ Ռայխսդակի պատուիրակութիւնը, քաղաքական ակնարկութիւն չէ ըրած. բայց երէկ ընդունելով բանակի բարձրաստիճան պաշտօնակալները, տեղի ունեցած խօսակցութեան մէջ, Ն. Կ. Վեհափառութիւն գոհութիւն յայտնած է քաղաքական կացութեան բարուքումէն։

— Ռուսիա Կեղբ. Ասիոյ Ամու Տարեա գետին վրայ բանեցուցած չոգենաւերը կը բազմացնէ եւ կը սառարացնէ, զինուորական նպատակներու գործածուիլ կարենալու համար։

— Մարոքի գործոց միջազգային կարգադրման համար Սպանիոյ առաջարկած դեսպանախորհրդին գումարման հաւաներ են Ֆրանսա, Անգլիա, Գերմանիա, Ռուսիա եւ Իտալիա։ Դեսպանախորհուրդն իւր առաջին նիստը պիտի ընէ յունուարի ըսկիզբը։

ՆԵՐՔԻՆ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Աւստրիոյ Կայսրը ԵէլոՇէ Թաֆի պատուանշանի երկրորդ աստիճանը նուիրած է մայրաքաղաքիս պարսկական դեսպանատան առաջին քարտուղար Արթաքի Խան Նէվրուզի։

— Նախարարաց Խորհուրդը շաբթուս ղրազելով Սիւէզի ջրանցքին չէզոքացման խնդրով իւր որոշումը տուաւ եւ տեղեկագիր մը պատրաստելով մատոյց Վեհ. Սուլթանին։

—Լատինաց տարեգլխոյն առթիւ, Վեհ. Սուլթանն հեռագրաւ բարեմաղթութիւններ ուղղեր է Եւրոպիոյ բոլոր կաթոլիկ վեհապետաց որք փոխադարձաբար իրենց շնորհակալութիւնն յայտներ են հեռագրաւ։

—Վեհ. Սուլթանին հրամանաւ նոր քննութիւնք պիտի կատարուին ի մասին կալուածական տրոց եւ այս օրերս յատուկ պաշտօնեայներ պիտի կարգուին որք ընդհանուր քննութեան մը պիտի ձեռնարկեն

և ամենայն արդարութեամբ պիտի որոշէն կալուածոց արժէքները ։

—Աղեքսանդրիայէն կը գրեն թէ եգիպտական կառավարութիւնը երեսուն ոսկւոյ տուրք մը դրեր է ծխախոտ մշակուած հողերուն մէն մի ֆէտտանին համար ։ Այս տնօրինութեամբ կը յուսացուի թէ օտ. ծխախոտին ի Թուրքիա ներմուծումը բազմապատկի ։

—Կայս. հրամանաւ Ներքին գործոց նախարարութիւնն հեռագրաւ ծանուցած է Կարնոյ և Տրապիզոնի կուսակալութեանց՝ թէ Բաբերդի սանճաքը ջնջուած է և իբրեւ Գազա Կարնոյ կուսակալութեան իրաւասութեան ներքեւ դրուած է ։

Այս որոշում յառաջիկայ մարտ ամսէն պիտի գործադրուի ։

—Սաադէթ կ'իմանայ թէ օտար դրամատեարց խումբ մը մենաշնորհ կը խնդրէ կայս. կառավարութենէն երկաթուղի մը շինելու համար Սամսոնէն մինչեւ Ամասիա ու Սեբաստիա եւ թէ Առեւտրական ու Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը ձեռնարկած է այս առաջարկի քննութեան ։

—Անցեալները Սաադէթ ծանուցած էր թէ Բաղէշի Կալբադ գաւառակի Պաթըրեան քրիստոնեայ գիւղի ժողովուրդն իսլամական կրօնն ընդունած է ։

Հաքիքաթ կ'իմանայ թէ այդ գիւղի ժողովուրդն, որ յիսուն երեք հոգիէ կը բաղկանայ Եէզիտ կոչուած արեւապաշտ ցեղին կը վերաբերի ։

—Վեհ. Սուլթանին հրամանաւ՝ Հանրային պարտուց վարչութեան ժողովոյ օսմանեան պատուիրակ անուանուեցաւ Համտի պէյ ։

—Պ. Սատի Գառնօ իբր Փրանսական Հանրապետութեան նախագահ ընտրուելուն առթիւ ինքնագիր նամակ մ'ուղղած է առ Վեհ. Սուլթանն ։ Ֆրանսական դեսպան Մոնդէպէլլօ կոմսն, որոյ ղրկուած է այդ նամակն, ի մօտոյ Վեհ. Սուլթանին ներկայանալով Ն. Վեհափառութեան պիտի մատուցանէ զայն ։

—Պրուսայի նահանգին Էսկիշէհիր գաւառակի նախկին գայմագամ Ալի Րիզա էֆէնտի, որ ինչ ինչ ամբաստանութեամբ դատաստանի ենթարկուած էր, անպարտ արձակուեր է ։

—Պէրութի նորակազմ գաւառին մէքթուպճի պիտի անուանուի Ադրիանուպոլսոյ մէքթուպճի Րաուֆ պէյ և Տէֆթէրտար պիտի անուանուի Պէրութի նախկին հաշուակալ Շէրիֆ էֆէնտի ։

—Լը Թիւրք կ'իմանայ թէ Արեւելեան երկաթուղեաց վիճակահանութեան վերջին անգամի առաջին պարգեւը (600,000 Փրանք) շահեր է հայ մը, որ երբեմն սեղանաւորական գործեր կ'ընէր ի Ղալաթիա և այժմ Աղեքսանդրիա հաստատած է իւր բնակութիւնը ։ Այդ բաղդաւորեալ անձ իւր արժէթուղթը Կ. Պոլիս ղրկած է շահած գումարն (100 ին 58 զեղչով) գանձելու համար Հանրային Պարտուց վարչութենէն ։

—Կը ծանուցուի թէ «Պանք տը Քօնսդանդինօբլ» դրամատունը իւր վարչութեան անդամներէն Պ. Ժորժ Զօրօնիոյի միջոցաւ ձեռնարկներ կ'ընէ կայս. կառավարութեան մօտ, Աղնամայի պղնձի հանքաց շահագործման արտօնութիւնն ստանալու համար ։

—Հրամանաւ կայս. կառավարութեան Մուսթաֆա Փաշայի իշխանութիւնք ամսոյս 11/23 էն սկսեր են 100 ին 8 մաքսատուրք մ'առնուլ Պուլկարիայէն և Արեւելեան Րումելիէն բերուած ապրանաց համար ։ Պուլկար պաշտօնատարք եւս փոխադարձաբար նոյն մաքսատուրքը կ'առնուն Կ. Պոլսէն Պուլկարիա տարուած ապրանքներէն ։

ԱԶԳԱՅԻՆ

Երեքշաբթի առաւօտ [illegible] Իզմիրի Թղթակցէն մայրաքաղաքս հասած հեռագիր մը հետեւեալ գոյժը կը հաղորդէր ։

Իզմիր, 3 յնվր. երեքշաբթի

«Այս առաւօտ աննկարագրելի ցաւով իմացանք քաղաքիս մէջ թէ Ազգային Բարերարն Վսեմ. Յովհաննէս էֆէնտի Սպարթալեան գիշերն ի Տէր հանգած է յանկարծական մահուամբ ։

«Բովանդակ Հայ հասարակութիւնը խորին սգոյ մէջ ընկղմեցաւ ։

«Յուղարկաւորութեան համար մեծ պատրաստութիւնք կը լինին ։

«Հայոց շուկան փակեցաւ ի նշան սգոյ» ։

Ազգային մեծանուն Բարերարի մը մահուան անակնկալ լուրը խորին տպաւորութեամբ համակեց մայրաքաղաքիս բոլոր ազգայինները ։

Ազգ. Պատրիարքարանին կողմէ շրջաբերականներ ուղղուեցան եկեղեցեաց քարոզիչներուն որով ծանուցելով Սպարթալեան Վսեմ. Յովհաննէս էֆէնտիի ցաւալի մահն, յանձնարարուեցաւ որ յառաջիկայ կիւրակի առաւօտ բոլոր եկեղեցեաց մէջ հոգեհանգստեան պաշտօններ կատարուին ի հանգիստ հոգւոյ մեծանուն Բարերարին ։

—Ռոտոսթոյի առաջնորդ Գեր. Ներսէս Եպիսկոպոս, որ մայրաքաղաքս կը գտնուի, նախընթաց օր Երուսաղեմատուն երթալով տեսակցեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր հետ ։

Ն. Գերապատուութիւն յետոյ Պատրիարքարան երթալով տեսակցեցաւ նաեւ Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հօր հետ ։

—Մշակ կը հաղորդէ թէ Էջմիածնի Հայոց դպրոցական նորահաստատ ծրագիրն իւր անորոշ եւ միակողմանի ուղղութեան պատճառաւ շփոթութեան եւ երկմտութեան մէջ ձգած է դպրոցաց վարչական և ուսումնական կառավարութիւնն, այնպէս որ միշտ անհամաձայնութիւնք տեղի կ'ունենան այդ մասին, Էջմիածնայ հոգեւոր իշխանութիւնն ի նկատ առնելով այս վըտանգաւոր վիճակը մտադիր է դպրոցաց համար կազմել նոր եւ աւելի մշակեալ ծրագիր մը ։

—Հարսանեկան հանդիսից տարեգրոց մէջ փառաւոր էջ մը պիտի գրաւէ Պերլինի Օսմ. դեսպանատան խորհրդական Վսեմ. Օհան էֆէնտի Պաղտատլեանի ընդ Ազն. Օրիորդ Վիրգինիա Ներսէսեանի պսակման հանդէսն, որ կիրակի գիշեր տեղի ունեցաւ ի Գատըգիւղ Ներսէսեանց բնակարանին մէջ ։ Ամեն. Խրիմեան Հայրիկ հրաւիրեալ ի պըսակադրութիւն, անկողնոյ ծառայելով տակաւին, Ն. Սրբազնութեան կը փոխանորդէր Գեր. Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ ։ Աւելի քան հարիւր քսան հանդիսականաց մէջէն կը նշմարուէին գերմանական դեսպանուհի տիկին Րատովից եւ իւր երկուքին դստերք, ռուսական դեսպան Պ. Նէլիտոֆի որդի Պ. Իվան Նէլիտոֆ և Պ. Պ. Իվանով և Ալուգով, իտալական դեսպան Պ. Պլան, անգլիական դեսպանին դուստր Օրիորդ Հուայդ, Պարսկական դեսպան Միրզա Մոհսին Խան, հոլանտական դեսպան Պ. Վան Դէդս, Արտաքին գործոց նախարար Վսեմ. Սայիտ փաշայի որդի Քեազիմ պէյ, Ֆոն Տէր Կոլց փաշա, Տիւսար փաշա, Ֆայիգ փաշա եւ բազմաթիւ պատուաւոր ազգայինք, շատերն ընտանեօք ։ Եկեղեցականաց դասէն ներկայ էին նաեւ Ռոտոսթոյի առաջնորդ Գեր. Ներսէս Եպիսկոպոս, Գատըգիւղի քարոզիչ Եղիշէ Վ. Այվազեան եւ Տ. Յովհաննէս Քհ. Միրեան ։

Պսակի հանդէսը կատարուեցաւ կնքահայրութեամբ Մկրտիչ էֆէնտի Էսաեանի եւ պսակադրութեամբ Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյի ։

—Նոյնպէս կիւրակէ գիշեր վայելուչ շքով տեղի ունեցաւ ի Գուրուչէշմէ, Յակոբեանց բնակարանին մէջ, փաստաբան Մեծ. Յակոբ էֆէնտի Յակոբեանի հարսանեաց հանդէսն, ընդ Ազն. Օրիորդ Բերուզ Պամպաճեանի, կնքահայրութեամբ վաճառական Մեծ. Միհրան էֆէնտի Տէօքմէճեանի, ի ներկայութեան երկուց կողմանց բարեկամաց և ազգականաց ։

—Կարսէն կը գրեն առ Մշակ թէ Ս. Էջմիածնի Սինոդէն հասած հրաման մը համաձայն տեղւոյն առաջնորդական տեղապահ Աղուանեան Գեր. Գրիգորիս Եպիսկոպոս հրաժարեցուցեր և Ս. Էջմիածին հրաւիրուեր է ։ Յաջորդն յայտնի չէ դեռ ։

—Գեր. Սիմէոն եպիսկոպոս Սէֆէրեան՝ ի դիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր՝ երկուշաբթի առաւօտ Պէօյիւքտէրէ, Բարձ. Աբրահամ փաշայի ապարանքը գնաց ի շնորհաւորութիւն Ն. Բարձրութեան անուան տօնախմբութեան ։

—Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հայրն՝ ընկերակցութեամբ Ասլանեան Արժ. Ներսէս եւ Սարաճեան Արժ. Յովսէփ վարդապետներու, երեքշաբթի օրը Բերա, Վըսեմ. Աստուածատուր Ջունդ Ասպետի բընակարանը գնաց ի շնորհաւորութիւն նորա անուան տօնախմբութեան ։

—Զանգըրիէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սարըեան Մկրտիչ էֆէնտին ճամբայ ելած է Կ. Պոլիս գալու համար ։

—Մանչէսթր Օպզէրվըր կը ծանուցանէ իւր չորեքշաբթի աւուր թուով.

«Մշոյ կառավարութիւնն ազդարարեց տեղւոյն հայկական վարժարանաց, զորս կը հոգան Միացեալ Ընկերութիւնք, յատուկ արտօնութիւն ստանալ Կ. Պոլսոյ կրթական նախարարութենէն, ապա թէ ոչ պիտի փակուին ։»

Ըստ նորագոյն լրոյ, փակումն արդէն տեղի ունեցեր է, ձեռամբ տեղական կառավարութեան ։

Guerlain de Paris.

15, *Rue de la Paix.*

ՀԱՍԱՐԱԿՈՐԴԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՈՏԱՒԷՏ ՆԻՒԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, *օծանելի սրբուզարդի համար* Ambrosial cream, *օծանելի քսուք ածիլելու մորթը համար*. Crême de Fraises *մորթը կակուղցնելու համար*. Poudre de Cypris *զովացնելու և ճերմկցնելու համար մորթը*. Stilboïde *փայլ տալու համար մազերուն և մօրուքին*. Eau Athénienne et Eau lustrale *հոտ խնկելու և մաքրելու համար գլուխը*. Alcoolat de Cochlearia *ակռաներու համար*. Eau de Chypre *արդուզարդի համար*: *Թաշկինակի համար հոտաւէտ նիւթեր*՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Marie Christine. Imperial Russe. 977 20—29

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Կ. ՆԱՎՐՈՒԶԵԱՆ և Յ. ԽՈՒԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ.

Ընդարձակ ամենայն գուսասց հետ

Զլնէ եւ ճավայէ ուղղակի բեռցած
Գերրճաիր եւ ամեն ճաշակի յարմար բէյեր
ԳՆԵՐ ՁԱՓԱՒՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ

Փորձը ամեն գովեստէ յաւագոյն ըլլալ հաստատէ հինգ տարիէ ի վեր սոյն վաճառատան ըրած գոհունակութիւնքն յաճախորդները գոհացնելու համար:

Պաղճէ Գաբու Ճէլալ պէյ խանի
դրան կից Թիւ 10

1000 68—78

Հրատարակութեան

ԸՆԴԱՐՁԱԿ

ՕՐԱՑՈՅՑ

1888

ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Կը պարունակէ բաց ի տոմարական գիտելիքներէ՝ ժամանակագրութիւնք —Այբուբենական դրամոց դըլխաւոր ազգաց.—Ամանունք.—Անուանք Օսմ. կայսերաց.—Աւագանի կայս. Պալատան.—Նախարարք Բ. Դրան.—Մեծ պաշտօնատարք մայրաքաղաքիս.—Հրամանատարք բանակաց.—Պետական խորհուրդ.—Արդարութեան և կրօն. գործոց Նախարարութիւն.—Մաքսատունք.—Կուսակալք նահանգաց.—Պատրիարքունք եւ Ազգապետք.—Օսմանեան դեսպանք.—Դեսպանք եւ հիւպատոսք օտար տէրութեանց ի Կոստանդնուպոլիս.—Վիճակագրութիւն օսմանեան կառավարութեան.—Հայ ազգի պաշտօնատարք եւ ատենակալք.—Հայրապետութիւն հայոց.—Եպիսկոպոսունք.—Ազգ. կեդրոնական վարչութիւն.—Յանձնաժողով.—Պաշտօնեայք պատրիարքարանի.—Առաջնորդութիւնք Թուրքիոյ և Թեմք.—Հովուութիւնք.—Մայրավանք Թուրքիոյ.—Թաղօրեայք Կ. Պոլսոյ.—Համագումար Թաղօրէից.—Բարեգործ. եւ կրթ. հաստատութիւնք.—Առաջնորդութիւնք ի Ռուսաստան եւ այլն:—Մայրավանք ի Ռուսաստան եւ այլն.—Կայսերական գերդաստան Ռուսիոյ.—Հայազգի ատենականք եւ պաշտօնատարք Ռուսական տէրութեան.—Նոյն, Պարսկական տէրութեան.—Նոյն, այլ եւ այլ տէրութեանց.—Հռովմէական հայ համայնութիւն.—Բողոքական հայ համայնութիւն:—Ցուցակ կրթական պաշտօնէից.—Դասատուք պետական ուսումնարանաց.—Բժիշկ քաղաքային եւ զինուորական.—Փաստաբանք.—Արուեստագէտք.—Լրագիրք.—Հեռագրութիւնք Թուրքիոյ և միջազգային.—Միջազգային թղթատարութիւն.—Եւրոպական նամակատունք.—Ցամաքային թղթ. սակա-

կան Թուրքիոյ.—Ժամանակացոյց Օսմ. Միջ. Թղթ.—Ազգ.—Տանուցմունք.

Գինն է 3 դահեկան

Կեդրոնատեղին է Գ. Պաղտատլեան գըրատուն, Յակոբեան խան Թիւ 13.

1538

Վասն Արտօնատեան
Տնօրէն-Պատասխանատու
Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼՔ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՑ

ՄԻՍԻՍ Ս. Ա. ԱԼԼԷՆԻ
ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ՄԱԶ. ՆՈՐՈԳԻՉԸ
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերջինը ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը: Գլխու թեփը շուտ մը անհետ կ'ըլլէ: Իր անուշ հոտը աստ է ու հեշտալի:

"Մէկ շիշը կը բաւէ:" Այդ փորձը ունեցան ամենքը որոնց մոխրագունած մազերը իրենց բնական գոյնին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան: Ներկ չէ, և ամենևին վնաս մը չըներ: Եթէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը առայիր Միսիս Ս. Ա. Ալլէնի Համաշխարհական մազի նորոգողին. (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). *Նոյնպէս Բարիզ ու Նիւ Եօրք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անուշ իւղագործներու և անգղիացի դեղագործներու քով:*

Կը գտնուի Ն. և Փ. Գանդիւք եղբարց բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Խամբեա Բարոնան. Անգլիական մթերանոց, Սիրքէճի Գալաթիա. եւ Իզմիր Լոգոնանէլլա 433, Բերա Մեծ փողոց:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԱՂԿԱՓՈՒՆՋ
ԳԵՂԵՑԿԱՑՈՒՆՈՂ ՄԱՐՄՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ ԾԱՂԿԱՓԹԻԹ, ՄԻՇՏ ԹԱՐՄ:

Ընդամուան մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ և բազմաթիւ փոշիներէ: Առաջին անգամ գործածելովն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ երեսը, վիզը, թեերը և ձեռուըները պիտի առնուն անուշ փափկութիւն մը և մարմարինի փայլ, հանդերձ շուշանի և վարդի գունով և բուրմամբ: Սապոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցունէ: Ընհետ կ'ընէ մորթի սեւուքը, երեսի և ձեռքի ցանները, արևայրուքը, և ուրիշ ամեն բրտութիւն և բծաւորութիւն: Եւ աս ամեն բանով՝ անկարելի կ'ընէ մասնաւոր թէ արհեստով գեղեցկացուածէ:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). *Նոյնպէս Բարիզ ու Նիւ Եօրք: Կը վաճառուի սափրիչներու, անուշ իւղագործներու և անգղիացի դեղագործներու քով:*

Կը գտնուի Ն. եւ Փ. Գանդիւք եղբարց բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Խամբեա. Բարոնան. Անգլիական մթերանոց, Սիրքէճի Գալաթիա. և Իզմիր Լոգոնանէլլա 433, Բերա Մեծ փողոց:




ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒ:

ՄԻԼՐՈԶ
ՄԱԶԵՐՈՒ ՄԻԱԿ ՃԱՏԻԿ ՆՈՐՈԳԻՉ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմըկած կամ գունաթափ մազերը. Կը դադրեցունէ անոնց թափիլը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:
Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). *Նոյնպէս Բարիզ ու Նիւ Եօրք:*

Կը գտնուի. Ն և Փ. Գանդիւք եղբարց բրիտանական դեղարանը, Բերա. Մեծ փողոց. Խամբեա Բարոնան, Անգլիական մթերանոց, Սիրքէճի Գալաթիա. և Իզմիր Լոգոնանէլլա 433, Բերա Մեծ փողոց: